



*California's protection & advocacy System*

# Medi-Cal. որտեղ հնարավոր է գտնել օրենքներ, կարգավորումներ և այլ անվճար տեղեկատվություն համացանցում

---

*2018 հուլիս, հրատ. #5511.10 - Armenian*

Medi-Cal-ը նահանգային և դաշնային ծրագիր է, որն ապահովում է առողջապահական ծախսերի ֆինանսավորումը բազում ցածր եկամուտ ունեցող մարդկանց համար: Կալիֆորնիայում Medi-Cal-ի նահանգային ղեկավար մարմինը Առողջապահական ծառայությունների բաժանմունքն է (Department of Health Care Services) [\[սեղմե՛ք այստեղ DHCS-ի կայքի համար\]](#): Գոյություն ունեն նաև այլ նահանգային գործակալություններ, որոնք դերակատարություն ունեն Medi-Cal-ում, ներառյալ «Կառավարվող առողջապահության բաժանմունքը» (Department of Managed Health Care), «Հոգեկան առողջության բաժանմունքը» (Department of Mental Health), «Զարգացման ծառայությունների բաժանմունքը» (Department of Developmental Services) և այլն:

Medi-Cal-ը դաշնային «Medicaid» ծրագրի Կալիֆորնիա նահանգի տարբերակն է: Medicaid-ը իրականացնող դաշնային գործակալությունը «Առողջապահության և սոցիալական ապահովության բաժանմունքն է» (CMS): [\[սեղմե՛ք այստեղ CMS-ի կայքի համար\]](#):

Այս փաստաթղթում ներկայացված է Medi-Cal-ի մասին համացանցում ուսումնասիրություն կատարելու վերաբերյալ, հիմնական տեղեկատվությունը: Մենք խորհուրդ ենք տալիս հետևել այս

փաստաթղթում գետեղված ցուցումներին. հնարավոր է, որ Medi-Cal-ի վերաբերյալ կարգավորումներին և օրենքներին դժվար լինի հետևել, այսպիսով՝ Ձեզ համար օգտակար կլինին ախքան օրենքն ուսումնասիրելը կարգավ տարբեր ուղեցույցներ և ձեռնարկներ:

## **1. Որտե՞ղ կարող եմ հասկանալի տեղեկատվություն գտնել Medi-Cal-ի մասին:**

«Առողջապահական ծառայությունների սպառողների դաշինքի» (Health Consumer Alliance) կայքը, [\[սեղմե՛ք այստեղ HCA-ի կայքի համար\]](#), շատ օգտակար ռեսուրս է առողջապահական տեղեկատվության առումով: Կայքում ասվում է. «Առողջապահական ծառայությունների սպառողների դաշինքը (*Health Consumer Alliance (HCA)*) հեռախոսով կամ անձամբ *անվճար աջակցություն է տրամադրում՝ այն մարդկանց օգնելու համար, որոնք ջանքեր են գործադրում առողջապահական խնամքի համար ֆինանսավորում ստանալու կամ այն պահպանելու համար և նրանց բժշկական ապահովագրական ծրագրերի հետ կապված խնդիրները լուծելու համար*»: «Առողջապահական ծառայությունների սպառողների դաշինքը» (*Health Consumer Alliance*) նաև սպառողների կողմից հեշտ իրացվող բազում նյութեր է հրապարակում [\[սեղմե՛ք այստեղ Սպառողի իրավունքներ \(Consumer Rights\) կայքի համար\]](#) կայքում: Այս նյութերը հեշտությամբ հասկացվում են և դրանք ներառում են սպառողների համար մեծ հետաքրքրություն ներկայացնող թեմաների լայն շրջանակ:

«Իրավունքի և աղքատության հարցերով արևմտյան կենտրոնը» (*Western Center on Law and Poverty*) հրապարակում է Medi-Cal –ի համար բժշկական պայմանումնակության մասին շատ օգտակար ուղեցույց [\[սեղմե՛ք այստեղ WCLP կայքի համար\]](#): 2016 թվականին հրատարակված այս ուղեցույցը Կալիֆորնիայի փաստաբաններին, իրավաբանական ծառայություններ տրամադրող իրավաբաններին, ներգրավման վերաբերյալ խորհրդատուներին, համայնքային կազմակերպիչներին և այլոց համար ներկայացնում է համապատասխան կանոնադրությունները, կարգավորումները և ուղեցույցները՝ առողջապահական ծածկույթի ծրագրերում նրանց հաճախորդների ընդգրկմանն աջակցելու համար:

Կալիֆորնիայի «Հաշմանդամների իրավունքները» կազմակերպության (Disability Rights California) կայքում տեղեկատվություն կա տարբեր առողջապահական հարցերի վերաբերյալ՝ ներառյալ Medi-Cal ծրագրի մասին տեղեկատվությունը հետևյալ հղումով [\[սեղմե՛ք այստեղ DRCA Առողջապահական տեղեկությունների համար\]](#):

«101 հաշմանդամների նպաստներում» ([սեղմե՛ք այստեղ Disability Benefits 101]) առկա է օգտակար տեղեկատվություն նպաստների բազում ծրագրերի՝ ներառյալ Medi-Cal-ի մասին, հետևյալ հղումով՝ [\[սեղմե՛ք այստեղ Disability Benefits 101-ի տեղեկությունների համար\]](#):

«Ազգային առողջապահական իրավունքի (National Health Law)» կայքը [\[սեղմե՛ք այստեղ NHL կայքի համար\]](#), նույնպես ներառում է Medicaid-ի վերաբերյալ ընդհանուր տեղեկատվություն և թարմացումներ: Ուսումնասիրե՛ք հրատարակումները և փնտրե՛ք «Medicaid»-ը:

Գլուխ 13. Կալիֆորնիայի «Հաշմանդամների իրավունքներ»՝ «Լենթերման օրենքի» ներքո գտնվող իրավունքների վերաբերյալ ուղեցույցը, որը վերաբերում է անկարողություններ ունեցող մարդկանց կողմից «Ընտանեկան (Medicaid Home) և համայնքային զարգացման ծառայություններից» հրաժարվելուն (Community-Based Services Developmental Disabilities Waiver)՝ տարածաշրջանային կենտրոնների սպառողների համար առկա է հետևյալ հղումով՝ [\[սեղմե՛ք այստեղ RULA հրատարակության կայքի համար\]](#):

«Տարեցների տների բարեփոխման Կալիֆորնիայի պաշտպանների» կազմակերպությունը (California Advocates for Nursing Home Reform) [\[սեղմե՛ք այստեղ CANHR կայքի համար\]](#) ունի բազում նյութեր սպառողների և պաշտպանների համար, ներառյալ շատ կարևոր տեղեկատվություն Medi-Cal-ի մասին՝ Երկարաժամկետ խնամքի համար (Medi-Cal for Long Term Care), որն առկա է հետևյալ հղումով [\[սեղմե՛ք այստեղ CANHR LTC-ի կայքի համար\]](#):

## **2. Որտե՞ղ կարող եմ գտնել Medi-Cal-ի վերաբերյալ «Կալիֆորնիա նահանգի օրենսդրական ակտերը»:**

Դուք կարող եք ուսումնասիրել «Կալիֆորնիայի օրենքները» (օրենսդրական ակտերը) հետևյալ կայում՝ [\[սեղմե՛ք այստեղ Կալիֆորնիայի օրենսդրական տեղեկատվության կայքի համար\]](#):

Կալիֆորնիա նահանգի՝ Medi-Cal-ի վերաբերյալ ընդհանուր օրենսդրական ակտերը ներառված են Կալիֆորնիա նահանգի «Բարեկեցության և հաստատությունների մասին» օրենսգրքի (California Welfare & Institutions Code) §§ 14000 -14685 կետերում:

Հոգեկան առողջության ծառայությունների վերաբերյալ Կալիֆորնիա նահանգի օրենսդրական ակտերն առկա են Կալիֆորնիա նահանգի «Բարեկեցության և հաստատությունների մասին» օրենսգրքի §§ 5775-5782, 14680-14685 կետերում:

## **3. Որտե՞ղ կարող եմ գտնել Կալիֆորնիա նահանգի՝ Medi-Cal-ի վերաբերյալ կարգավորումները:**

«Կալիֆորնիա նահանգի նորմերի օրենսգիրքը» (California Code of Regulations) կարող եք գտնել այստեղ՝

- Կալիֆորնիա նահանգի վարչական իրավունքի գրասենյակ (California Office of Administrative Law), «Կալիֆորնիա նահանգի նորմերի օրենսգիրք», <https://oal.ca.gov/publications/ccr/>, կամ
- Վարչական իրավունքի գրասենյակում կարգավորումների վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ՝ [\[սեղմե՛ք այստեղ OAL-ի կայքի համար\]](#):

Կալիֆորնիա նահանգի՝ Medi-Cal-ի վերաբերյալ կարգավորումները մշակվել են Medi-Cal-ն իրականացնող նահանգային գործակալությունների կողմից:

Medi-Cal-ի վերաբերյալ ընդհանուր կարգավորումներն առկա են «Կալիֆորնիա նահանգի նորմերի օրենսգրքում» գլուխ 22, Բաժին 3, §§ 50000 -59999 կետերում:

Medi-Cal-ի չափորոշիչների ուղեցույցը (Medi-cal Manual of Criteria), [\[սեղմե՛ք այստեղ Medi-Cal-ի ուղեցույցի կայքի համար\]](#) սահմանում է Բուժման հաստատման հարցումը կամ ԲՀՀ-ն (TAR) հաստատելու կամ մերժելու ստանդարտները և ներառված է Medi-Cal-ի կարգավորումներում «Կալիֆորնիայի նորմերի օրենսգրքի» 22-ի § 51003(ե) կետում:

Medi-Cal-ի Հոգեկան առողջության վերաբերյալ կարգավորումներն առկա են Կալիֆորնիայի կարգավորումների օրենսգրքի 9-րդ գլխում: Պատճեն կարող եք գտնել այստեղ՝ [\[սեղմե՛ք այստեղ 9-րդ Գլխի կարգավորումների կայքի համար\]](#):

#### **4. Որո՞նք են Medi-Cal անաչառ լուծումները, ինչպե՞ս կարող եմ դրանց մասին տեղեկատվություն գտնել Կալիֆորնիայի առողջապահական ծառայությունների բաժանմունքում :**

Դուք Ձեր Medi-Cal-ի վերաբերյալ անաչառ լուծում խնդրելու իրավունք ունեք, և նաև ունեք այլ տարբերակներ: Կալիֆորնիայի առողջապահական ծառայությունների կայքում բացատրվում են Ձեր տարբերակները հետևյալ հղումով՝ [\[սեղմե՛ք այստեղ Անաչառ լուծան կայքի համար\]](#): Եթե մտադիր եք Medi-Cal-ի անաչառ լուծում խնդրել, ապա այս կայքը հարմար է Ձեր հետազոտությունը սկսելու համար: Այս փաստաթղթի 1-ին բաժնում քննարկված շատ նյութեր նույնպես օգտակար տեղեկություններ են պարունակում անաչառ լուծումների վերաբերյալ:

Ընդհանուր առմամբ, անաչառ լուծումների մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելե՛ք «Սոցիալական ծառայությունների բաժանմունքի» Նահանգային լուծումների ստորաբաժանման կայքը՝ <http://www.cdss.ca.gov/inforesources/State-Hearings> հղումով:

## **5. Ո՞րն է Կալիֆորնիայի Medicaid Նահանգային ծրագիրը և որտե՞ղ կարող եմ այն գտնել:**

Կալիֆորնիայի «Առողջապահական ծառայությունների բաժանմունքի» կայքում ասվում է հետևյալը. «*Medicaid Նահանգային ծրագիրը հիմնվում է «Սոցիալական ապահովության մասին» օրենքի XIX գլխում ներկայացված պահանջների վրա և այն Կալիֆորնիա նահանգի կողմից ստեղծված համապարփակ գրավոր փաստաթուղթ է, որը նկարագրում է Medicaid (Medi-Cal) ծրագրի բնույթը: Այն ծառայում է որպես պայմանագրային համաձայնություն Կալիֆորնիա նահանգի և Medicare ու Medicaid ծառայությունների կենտրոնների (CMS) միջև և պետք է իրականացվի համաձայն «Սոցիալական ապահովության մասին» օրենքի XIX գլխի հատուկ պահանջներին և Դաշնային կարգավորումների օրենսգրքի կարգավորումներին համապատասխան: Նահանգային ծրագիրը պարունակում է ամբողջ տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են CMS-ին որոշելու համար, արդյոք Նահանգը կարող է ստանալ Դաշնային ֆինանսական մասնակցություն (FFP) իր Medicaid ծրագրի համար: Այս կայքը ներառում է ներկա Medicaid Նահանգային ծրագիրը Կալիֆորնիայի համար, ինչպես նաև Նահանգային ծրագրի փոփոխությունները (SPA-ները)»:*

Կալիֆորնիայի Medi-Cal նահանգային ծրագիրն առկա է [\[սեղմել՝ այստեղ Medi-Cal ծրագրի կայքի համար\]](#): Այս կայքը նաև ունի հաստատված Նահանգի ծրագրի փոփոխությունների (SPA-ների) հղում, որոնք նորացնում են Նահանգային ծրագիրը:

## **6. Որո՞նք են Կալիֆորնիայի Medi-Cal-ի բացառություններ կազմող ծրագրերը, և որտե՞ղ կարող եմ տեղեկատվություն գտնել Կալիֆորնիայի առողջապահական ծառայությունների բաժանմունքի մասին:**

Կալիֆորնիայի առողջապահական ծառայությունների բաժանմունքի կայքում բացառություններ կազմող ծրագրերի մասին ասվում է հետևյալը . «*Medi-Cal բացառություններ կազմող ծրագրերը այնպիսի*

*ծրագրեր են Medi-Cal-ի շրջանակներում, որոնք լրացուցիչ ծառայություններ են տրամադրում անհատների հատուկ խմբերին, սահմանափակում են նահանգի կոնկրետ աշխարհագրական տարածքների ծառայությունները և բժշկական ծախսերի ֆինանսավորում են տրամադրում այն անհատներին, որոնք այլապես չէին համապատասխանի Medicaid-ի կանոններին:*

*Երբ Կալիֆորնիա նահանգը ցանկանում է զգալի փոփոխություններ կատարել իր Medicaid ծրագրում, այն պետք է ձեռնարկի երկու քայլերից մեկը՝ կամ (1) փոփոխի իր Նահանգային բժշկական ծրագիրը՝ Նահանգի պայմանագիրը դաշնային կառավարության հետ, կամ (2) ստանա բացառություն կամ Medicaid բացառություն կազմող ծրագիր ԱՄՆ Առողջապահության և Սոցիալական ծառայությունների բաժանմունքի «Սոցիալական ապահովության մասին» օրենքի զգլուխ XIX-ի մասերից (DHHS)»:*

Տեղեկատվություն Կալիֆորնիա նահանգի բազում Medi-Cal-ի բացառություններ կազմող ծրագրերի մասին DHCS կայքում, հետևյալ հղումով [\[տեղմե՛ք այստեղ Medi-Cal-ի բացառություն կազմող ծրագրերի համար\]](#):

Տեղեկատվություն Medi-Cal ծածկույթի ընդլայնման համար Կալիֆորնիա նահանգի «Կամուրջ դեպի բարեփոխում» 1115 բացառություն կազմող ծրագրի մասին: [\[տեղմե՛ք այստեղ 1115 Բաժնի շրջանակներում Բացառություն կազմող բժշկական ծրագրի համար\]](#)

Ի լրումն, տեսե՛ք Հաշմանդամների իրավունքներ-Կալիֆորնիա կազմակերպության՝ վերոհիշյալ 1-ին բաժնում քննարկված կայքերը՝ բացառություն կազմող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության համար:

## **7. Որտե՞ղ կարող եմ տեղեկատվություն գտնել Medi-Cal «Կառավարվող առողջապահական խնամքի» մասին:**

DHCS-ը այստեղ սպառողական տեղեկատվություն ունի Medi-Cal-ի «կառավարվող առողջապահական խնամքի» մասին՝ [\[տեղմե՛ք այստեղ](#)

[Medi-Cal-ի Կառավարվող առողջապահական խնամքի մասին](#): Այս կայքը հասկապես օգտակար է, քանի որ այն Ձեզ տրամադրում է հղումներ դեպի առանձին երկրներ, որոնց միջև շատ տարբերություններ կան:

«Կառավարվող առողջապահական խնամքի բաժանմունքը» տեղեկատվություն ունի Medi-Cal կառավարվող խնամքի մասին տարեց անձանց և հաշմանդամների վերաբերյալ այստեղ՝ [\[սեղմե՛ք այստեղ Առողջապահական խնամքի նպաստների և ծառայությունների տեղեկատվական թերթիկի համար\]](#):

### **8. Որտե՞ղ կարող եմ գտնել Medi-Cal-ի մասին «Կալիֆորնիա նահանգի տվյալները և վիճակագրությունը»:**

DHCS-ը տվյալներ և վիճակագրություն է հրապարակում Medi-Cal ծրագրի վերաբերյալ՝ ներառյալ այլոց կողմից պատրաստված տվյալների և վիճակագրության հղումները, հետևյալ հղումով՝ [\[սեղմե՛ք այստեղ Տվյալների և վիճակագրության կայքի համար\]](#):

### **9. Ի՞նչ այլ նյութեր է պատրաստում DHCS-ը Medi-Cal-ի մասին և որտե՞ղ կարող եմ դրանք գտնել:**

Տե՛ս Արևմտյան կենտրոնի Medi-Cal ուղեցույցի գլուխ 1-ը, որը ներկայացվում է DHCS կայքից Medi-Cal նյութերի մասին վերոնշյալ 1-ին հարցումը՝ հղումների հետ միասին:

DHCS-ը տրամադրում է Բոլոր վարչաշրջանների սոցիալական ապահովության հարցերով տնօրենների նամակներ (ACWDLs) և Medi-Cal-ի պայմանունակության վերաբերյալ տեղեկատվական նամակներ (MEBILs) նոր կամ փոփոխված կանոնների և (կամ) ընթացակարգերի վերաբերյալ, որոնք օգտագործվում են Medi-Cal-ի նպաստների համար պայմանունակությունը որոշելիս: Այս փաստաթղթերն առկա են [\[սեղմե՛ք այստեղ Վարչաշրջանների յայքի վերաբերյալ ռեսուրսների համար\]](#) հղումով:



DHCS-ի Medi-Cal-ի Պայմանունակության ընթացակարգերի ուղեցույցը (MEPM) «*պարզաբանում է տրամադրում վարչաշրջանի սոցիալական ծառայությունների անձնակազմին՝ Medi-Cal ծրագրի համար պայմանունակության վերաբերյալ որոշումներ կայացնելու կանոնների և ընթացակարգերի վերաբերյալ*»: Այն առկա է [\[սեղմե՛ք այստեղ Medi-Cal-ի Պայմանունակության ընթացակարգերի կայքի համար\]](#):

DHCS-ը հրապարակում է ծառայություններ մատուցողների ուղեցույցներ՝ տեղեկատվությամբ , որը նախատեսված է օգնելու ծառայություններ մատուցողներին գործադրել Medi-Cal համակարգը՝ հետևյալ հղումով՝ [\[սեղմե՛ք այստեղ Ծառայություններ մատուցողի ուղեցույցի համար\]](#):

## **10. Որտե՞ղ կարող եմ գտնել «Դաշնային բժշկական օրենքներ»:**

«Դաշնային բժշկական օրենքները» (կարգավորումները) ներկայացված են «Սոցիալական ապահովության մասին» օրենքի XIX գլխում, 42 U.S.C. 1396 -1397 հոդվ.: Դուք կարող եք ուսումնասիրել Օրենքը հետևյալ հղումով՝ [\[սեղմե՛ք այստեղ Միացյալ Նահանգների Օրենսգրքի կայքի համար\]](#):

Medicaid «Դաշնային օրենքները» դժվար է պահպանել: Մենք խորհուրդ ենք տալիս Ձեր ուսումնասիրությունը սկսել այլ նյութերից՝ ներառյալ Արևմտյան կենտրոնի՝ վերոհիշյալ 1-ին հարցում նկարագրված ուղեցույցը՝ նախքան «Դաշնային օրենքների» ուսումնասիրությունը սկսելը:

## **11. Որտե՞ղ կարող եմ գտնել Medicaid «Դաշնային կարգավորումները»:**

Medicaid «Դաշնային կարգավորումները» մշակում է ԱՄՆ «Առողջապահության և սեցիալական ծառայությունների բաժանմունքը» , Medicare և Medicaid Ծառայությունների կենտրոնները (CMS-ներ): Այս կարգավորումները գտնվում են «Դաշնային կարգավորումների

օրենսգրքի» մաս 42, գլուխ 4-ում, 430-րդ և հաջորդ բաժիններում: Դուք կարող եք վերանայել Medicaid կարգավորումները անմիջապես հետևյալ կայքում՝ [\[սեղմե՛ք այստեղ CFR-ի կայքի համար\]](#):

Դուք կարող եք ուսումնասիրել «Դաշնային կարգավորումների օրենսգիրքը» ընդհանուր առմամբ այստեղ՝ [\[Սեղմեք այստեղ CFR կայքի համար\]](#):

Ինչպես «Դաշնային բժշկական օրենքներին», այս կարգավորումներին էլ երբեմն դժվար է հետևել: Մենք խորհուրդ ենք տալիս Ձեր ուսումնասիրությունը սկսել այլ նյութերից՝ ներառյալ Արևմտյան կենտրոնի՝ վերոհիշյալ 1-ին հարցում նկարագրված ուղեցույցը՝ նախքան «Դաշնային օրենքների» ուսումնասիրությունը սկսելը:

## **12. Medi-Cal-ի մասին ինչպիսի՞ այլ CMS նյութեր կան և որտե՞ղ կարող եմ դրանք գտնել:**

CMS կողմից մշակված բազում նյութեր առկա են հետևյալ CMS կայքերում՝

- Medicaid-ի սկզբնական էջ՝ [սեղմե՛ք այստեղ Medicaid-ի կայքի համար](#):
- Նահանգային Medicaid Տնօրենի նամակներ և Նահանգի Առողջապահության հարցերով պաշտոնյաի նամակներ՝ [\[սեղմե՛ք այստեղ Medicaid-ի կանոնների վերաբերյալ ուղեցույցի համար\]](#):
- Medicaid-ի ուղեցույց (Հրատ. թիվ 45), CMS-ի ցուցումները նահանգներին՝ Medicaid-ի մասին օրենքի իրականացման մասին՝ [\[սեղմե՛ք այստեղ CMS ուղեցույցի համար\]](#)
- Կարգավորումներ և ուղեցույցներ՝ [CMS կարգավորումների և ուղեցույցների վերաբերյալ](#):

Medicaid-ի վերաբերյալ Դաշնային վիճակագրությունն առկա է CMS կայքում հետևյալ հղումով՝ [\[ սեղմե՛ք այստեղ CMS ուսումնասիրության, վիճակագրության, տվյալների և համակարգի կայքի համար \]](#):

CMS-ի կայքը մի փոքր բարդ է և կարող է հաճախ փոփոխվել: Օգտակար տեղեկություններ գտնելու համար երբեմն որոշակի անցումներ է պահանջվում:

---

Սպասում ենք Ձեր նորություններին: Խնդրում ենք լրացնել ստորև ներկայացված հարցումը մեր հրատարակությունների վերաբերյալ և տեղեկացնել մեզ այն մասին, թե որքան արդյունավետ ենք մենք աշխատում: [\[ սեղմե՛ք այստեղ «Անցում դեպի հարցում» կայքի համար \]](#):

Իրավական աջակցության համար զանգահարե՛ք 800-776-5746 հեռախոսահամարին կամ լրացրե՛ք [\[ սեղմե՛ք այստեղ Աջակցության ձևի հարցման կայքի համար \]](#): Մնացած բոլոր հարցերով զանգահարե՛ք 916-504-5800 (Հյուսիսային Կալիֆորնիա). 213-213-8000 (Հարավային Կալիֆորնիա) հեռախոսահամարներին: